ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/123

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերություն
Մասնակից՝ «Սինխրոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սինխրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7069-2021 գրությամբ «Սինխրոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.04.2021թ. թիվ 01-03/227-21 գրության հիման վրա, 06.05.2021թ.-ին «Սինխրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.05.2021թ.-ին:

07.05.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/123 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

13.05.2021թ.-ին, 20.05.2021թ.-ին և 04.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.06.2021թ.-ին:

2. **<u>«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը 16.04.2021թ. թիվ 01-03/163-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Էջմիածին ջրօգտագործողների ընկերության» կարիքների համար (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հունվարի 27-ին պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները բողոքարկել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որի արդյուքնում վերջինս 03.04.2021թ. կայացրել է թիվ «ԳԲՔԱ-ՆԳ-2021/13» որոշումը, համաձայն որի՝ պարտագրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել Ընթացակարգի մասնակիցներ «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ»

ՍՊԸ-ի և «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը բավարար գնահատելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները:

Հիմք ընդունելով վերոգրյալից և ՀՀ կառավարության 2017թ. N 526-Ն որոշման 45-րդ կետը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի լուսապատճենները:»:

«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը 30.04.2021թ.-ին մեկ այլ՝ թիվ 01-03/227-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար 2021 թվականի հունվարի 27-ին պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սինխրոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «**Սինխրոն**» **ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 07.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սինխրոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7069-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 17.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «էջմիածին» ջրօգտագործման ընկերության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Սինխրոն» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՅ-ԼՕ-2021/123 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 16.04.2021թ. թիվ 01-03/163-21 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետև նաև՝ Մրցույթ) մասնակցելու նպատակով, Մասնակիցը 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ): Մրցույթի 03.02.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ Մասնակցի հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ «անհամապատասխանություն», մասնավորապես՝ արձանագրությամբ նշվել է (ոչ մանրամասն՝ անորոշ կերպով), որ Մասնակցի կողմից ներկայացված ապրանքների բնութագրերը ամբողջական չեն: «Անհամապատասխանության» վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցումը ուղարկվել է Մասնակցին 09.02.2021 թ-ին (ժամը 17:44 +03:00): Ծանուցմամբ պահանջվել է՝ հայտում տեղ գտած «անճշտությունները» լրացնել և մինչև 10.02.2021թ.-ի ժամը 18:00-ն ներկայացնել Պատվիրատուին:

1.2. 03.02.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված «անհամապատասխանությունը» շտկելու նպատակով, 10.02.2021թ.-ին (ժամը 14:59 +03:00) էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակիցը ներկայացրել է Պատվիրատուին փոփոխված (Մասնակցի ընկալմամբ շտկված) Մրցույթի հրավերի 1.1. հավելվածը:

1.3. 12.02.2021թ.-ի թիվ 4 արձանագրությամբ Մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով Մասնակիցը ճանաչվել է ընտրված:

1.4. «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ բողոքարկել է՝ 03.02.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ Մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով Մասնակիցին ընտրված ճանաչելու վերաբերյալ Պատվիրատուի որոշումը: 03.04.2021թ.-ին Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանը (այսուհետև նաև՝ Բողոքներ քննող անձ) բավարարելով բողոքը՝ բողոքի վերաբերյալ կայացրել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով որոշումը (այսուհետև նաև՝ Որոշում):

06.04.2021թ.-ին Որոշումը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր):

1.5. Ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել Որոշումը, մասնավորապես՝ Որոշմամբ թիվ «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև նաև՝ Մրցույթ) գնահատող հանձնաժողովին պարտադրվել է Մրցույթի թիվ 3 չափաբաժնի մասով դադարեցնել «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը: Բացի այդ, Որոշման պատճառաբանական մասում Բողոքներ քննող անձը սահմանել է, որ Պատվիրատուն պետք է դադարեցնի «Սինխրոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 41-րդ կետը՝ արձանագրի և ծանուցի «Սինխրոն» ՍՊԸ-ին՝ մանրամասն նկարագրելով վերջինիս հայտում հրավերի պահանջների նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

1.6. Առանց Որոշման պահանջները կատարելու, այն է՝ առանց Հայտում տեղ գտած «անհամապատասխանության» վերաբերյալ մանրամասն նկարագրված ծանուցումը Մասնակցին ուղարկելու և այդ ծանուցմամբ տեխնիկական բնութագրի շտկում պահանջելու, Պատվիրատուն Մրցույթի 13.04.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ Մասնակցի Հայտը մերժել է:

1.7. Մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը գնահատող հանձնաժողովը հաստատել է 25.01.2021թ.-ին իսկ գնումների պլանը Տեղեկագրում հրապարակվել է 27.01.2021թ.-ին:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ Կաավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 600-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» 18-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ընթացքում կայացվող որոշումները բաղկացած են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ Բողոքներ քննող անձի ուժի մեջ մտած որոշումը պարտադիր է բոլորի համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, քանի դեռ այն չի փոփոխվել կամ վերացվել դատարանի կողմից:

Ինչպես ցանկացած իրավական ակտ, որոշումն ունի իր կառուցվածքը, այն բաղկացած է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Ուստի գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական և փաստական հանգամանքների վերաբերյալ դիրքորոշումները, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են այդ հանգամանքների վերլուծության արդյունքում բողոքներ քննող անձի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել որոշման կատարումը: Ուստի, որոշման ամբողջական կատարման համար ենթակա է պարտադիր կատարման նաև որոշումներում բողոքներ քննող անձի արտահայտած դիրքորոշումները:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից՝ Որոշման պատճառաբանական մասում Բողոքներ քննող անձը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը Մասնակցին ընտրված ճանաչելու վերաբերյալ որոշումը դադարեցնելուց հետո՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, պետք է արձանագրի և ծանուցի «Սինխրոն» ՍՊԸ-ին՝ մանրամասն նկարագրելով վերջինիս հայտում հրավերի պահանջների նկատմամբ առկա «անհամապատասխանությունները»: Այսինքն, Որոշման համաձայն՝ Մասնակցին ընտրված ճանաչելու վերաբերյալ որոշումը դադարեցնելուն պետք է հաջորդեր գնահատող հանձնաժողովի մեկ այլ գործողություն՝ որոշում, որը Մասնակցին հնարավորություն էր տալու ներկայացնել Մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող հայտ՝ ապրանքի տեխնիկական բնութագիր: Սակայն Պատվիրատուն խախտելով և չկատարելով Որոշումը՝ առանց Կարգի 41-րդ կետը կիրառելու 13.04.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ մերժել է Մասնակցի Հայտը: Նշյալից կարող ենք արձանագրել, որ այս Ընթացակարգի նախաձեռնման պատճառը ոչ թե Մասնակցի կողմից թույլ տրված խախտումներն են, այլ Պատվիրատուի անգործությունն է և ոչ իրավաչափ գործողություններն են: Այսպիսով Պատվիրատուն խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասը անհիմն կերպով սահմանափակել է Մասնակցի

մասնակցությունը Մրցույթին և Մասնակցին կանգնեցրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ:

Վերոգրյալից հետևում է, որ Մրցույթի շրջանակներում Մասնակիցը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա., բ., կամ գ. ենթակետերով սահմանված խախտումները: Ուստի կարծում ենք, որ նշյալ հանգամանքներում այս ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:

Հարկ է նշել, որ Պատվիրատուն Գրավոր հիմքերին կից ներկայացրել է Մասնակցի կողմից կազմված Մարցույթի հրավերի հավելված 1.1. (տեխնիկական բնութագիր), սակայն այդ հավելվածը այն հավելվածն է, որը 10.02.2021թ.-ին (ժամը 14:59 +03:00) Մասնակիցը ներկայացրել էր Պատվիրատուին՝ թիվ 2 արաձանագրությամբ արձանագրված «անհամապատասխանությունը» շտկելու նպատակով:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: (...):»

Մրցույթի հրավերի 1-ին մասի 8.8 և 8.15 կետերի համաձայն. «8.8 Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...)

8.15 Սույն հրավերի 1-ին մասի 8.8 և 8.9 կետերում նշված փաստաթղթերը մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է վերջինիս՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ Մասնակցի հայտում հրավերի նկատմամբ արաձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները ենթակա են շտկման՝ մասնակցի կողմից շտկման վերաբերյալ ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում: Ընդորում, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերի համաձայն՝ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը, իսկ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Պատվիրատուն 09.02.2021 թ-ին (ժամը 17:44 +03:00) ծանուցել էր Մասնակցին հայտում հրավերի պահանջների նկատմամբ առակա «անհամապատասխանության» մասին, և շտկելու ու շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին ներկայացնելու համար վերջնաժամկետ էր սահմանել 10.02.2021թ.-ի ժամը 18:00-ն: Շտկման համար տրամադրված ժամանակահատվածը ուսումնասիրելով կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է վերը նշված իրավական ակտերով սահմանված նորմերը, քանի որ շտկված հայտը ներկայացնելու համար սահմանել է մեկ աշխատանքային օրվանից քիչ ժամանակահատված: Մասնավորապես՝ 10.02.2021թ.-ի ժամը 24:00 փոխարեն շտկված հայտը ներկայացնելու ժամանակահատված է սահմանվել մինչև 10.02.2021թ.-ի ժամը 18:00-ն:

2.3. Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝ տվյալ գնման գործընթացի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդորում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տվյալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը հատատելու պահին՝ գնման գարծընթացը սկսելուց Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր: Ուստի նշյալից կարող ենք փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է վերագրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ: Նշյալից էլ հետևում է, որ Մրցույթից ածանցյալ գործողությունները՝ ինչպիսին է Մասնակցին Ցուցակում ընդգրկելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները, իրավաբանական ուժ չեն կարող ունենալ:

2.4. Ամփոփելով դիրքորոշման հիմքերը և փաստարկները, կարծում ենք, որ Պատասխանողը Մրցույթը անց է կացրել Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ, մասնավորապես՝ Պատասխանողը խախտել է.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերը,

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 50-րդ հոդվածի 6-րդ մասերը,

- Կարգի 16-րդ, 17-րդ, 20-րդ և 21-րդ կետերը,

- Մրցույթի հրավերի 1-ին մասի 8.8 և 8.15 կետերը,

- ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով որոշումը:

Այսպիսով կարելի է եզրահանգել, որ Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ և այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ, 465-րդ հոդվածների և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ուժով շահագրգիռ ամձի պահանջով կարող է ճանաչվել անվավեր: Նշյալից էլ հետևում է, որ նման խախտումներով կազմակերպված մրցույթից բխող բացասական հետևանքները՝ ինչպիսին է այս Ընթացակարգը չեն կարող մեկնաբանվել ի վնաս մասնակցի: Ուստի կարծում ենք, որ սույն Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը ենթակա չէ Ցուցակում ներառման:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Սինխրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2021/123 ծածկագրով ընթացակարգը:

4. **<u>ՍՑ-ԼՕ</u>**-2021/123 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով 27.01.2021թ.-ին հայտարարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սինխրոն» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Սինխրոն» ՍՊԸ-ն:

iv. Հանձնաժողովի 13.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 03.04.2021թ.-ին կայացված թիվ «ԳԲՔԱ-ՆԳ-2021/13» որոշումը, որոշել է «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցներ «Բայազ էներգոշին» ՍՊԸ-ի և «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել:

v. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 03.04.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Վալմլ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված հիմքերը, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասով, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պահանջվող գնման առարկայի՝ պոմպի տեխնիկական բնութագիրը և այն համադրելով «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտով, այնուհետև շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հետ, արձանագրել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերով 3-րդ չափաբաժնի մասով պահանջվում է «Նոր խ/պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ պոմպ», իսկ «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 3-րդ չափաբաժնի մասով «Մակնիշը» սյունակում նշվել է «Նոր խ/պոմպ ԷՑՎ 12-255-30Գ պոմպ»: Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել և նույն հիմքով «Սինխրոն» ՍՊԸ-ն ծանուցվել է միայն ապրանքի տեխնիկական բնութագրերի ամբողջական չլինելու մասով, այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մակնիշը» սյունակում առկա անհամապատասխանություն չի արձանագրվել և չի տրվել շտկման, ուստի գտել է, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

vi. Նույն որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը արձանագրել է նաև, որ «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից ինչպես հայտով, այնպես էլ շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի «Արտադրողի անվանումը» սյունակում նշվել է Մոլդովա, Քիշնև, այսինքն՝ վերջինիս կողմից նշվել է ոչ թե Ընթացակարգի հրավերով պահանջվող «Արտադրողի անվանումը», այլ՝ արտադրող երկիրը, ուստի արտադրողի անվանման բացակայության պայմաններում հնարավոր չէ արձանագրել բողոքով բարձրացված խնդրի իրավաչափությունը: Սույն մասով ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրվել: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 10.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Սինխրոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ արձանագրի և ծանուցի վերջինիս՝ մանրամասն նկարագրելով «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7069-2021 գրությամբ «Սինխրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով 27.01.2021թ.-ին հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչված «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 03.04.2021թ.-ին կայացված թիվ «ԳԲՔԱ-ՆԳ-2021/13» որոշումը, որոշել է «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցներ «Բայազ էներգոշին» ՍՊԸ-ի և «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 03.04.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Վալմլ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված հիմքերը, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասով, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պահանջվող գնման

առարկայի՝ պոմպի տեխնիկական բնութագիրը և այն համադրելով «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտով, այնուհետև շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հետ, արձանագրել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերով 3-րդ չափաբաժնի մասով պահանջվում է «Նոր խ/պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ պոմպ», իսկ «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 3-րդ չափաբաժնի մասով «Մակնիշը» սյունակում նշվել է «Նոր խ/պոմպ ԷՑՎ 12-255-30Գ պոմպ»: Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել և նույն հիմքով «Սինխրոն» ՍՊԸ-ն ծանուցվել է միայն ապրանքի տեխնիկական բնութագրերի ամբողջական չլինելու մասով, այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մակնիշը» սյունակում առկա անհամապատասխանություն չի արձանագրվել և չի տրվել շտկման, ուստի գտել է, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Նույն որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը արձանագրել է նաև, որ «Սինխրոն» ՍՊԸ-ի կողմից ինչպես հայտով, այնպես էլ շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի «Արտադրողի անվանումը» սյունակում նշվել է Մոլդովա, Քիշնև, այսինքն՝ վերջինիս կողմից նշվել է ոչ թե Ընթացակարգի հրավերով պահանջվող «Արտադրողի անվանումը», այլ՝ արտադրող երկիրը, ուստի արտադրողի անվանման բացակայության պայմաններում հնարավոր չէ արձանագրել բողոքով բարձրացված խնդրի իրավաչափությունը: Սույն մասով ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրվել: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 10.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Սինխրոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ արձանագրի և ծանուցի վերջինիս՝ մանրամասն նկարագրելով «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի

(պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 03.04.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ... գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման

ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 03.04.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի 13.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված «Սինխրոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ չէ, այն չի ելնում թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 ծածկագրով կայացված որոշման պատճառաբանություններից, այլ հակասում է դրանց:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Սինխրոն» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7069-2021 գրությամբ «Սինխրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/123 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**